ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » օգոստոս 2026թ. No 4534 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 121 և 122 կետերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 03/4123-26 առ 03.08.2026թ. գրությունը և ռեֆերենտ երկրի փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման հաստատում (վերագրանցում, ճանաչող երկիր) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 4 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տնօրենին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-

ի 32-րդ ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 139-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 139-րդ կետի, հաշվարկը սկսվում է ռեֆերենտ երկրում գրանցումը ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Восстановимая подпись

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Подписано: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի օգոստոսի « 06 » - ի N 4534- Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման հաստատում (վերագրանցում, ճանաչող երկիր) ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սինուպրետ էքստրակտ | բոքի արմատներ, գնարբուկի ծաղիկներ, ավելուկի խոտ, կտտկենու ծաղիկներ, աղավնիձի խոտ | դեղահատեր թաղանթապատ | 160մգ; (20/2x10/) բլիստերում, (40/4x10/) բլիստերում | Բիոնորիկա ՍԵ, Կերչենշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալց- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Ռոտենդորֆ Ֆարմա ԳմբՀ, Օստենֆելդեր Շտրասսե 51-61, 59320 Էնիգերլոհ, Գերմանիա- բալք արտադրող | Գերմանիա | Բիոնորիկա ՍԵ, Կերչենշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալց | Գերմանիա | ԱԴ | 24390 (047068) 31.07.2026 |
| 2 | Սինուպրետ էքստրակտ | բոքի արմատներ, գնարբուկի ծաղիկներ, ավելուկի խոտ, կտտկենու ծաղիկներ, աղավնիձի խոտ | դեղահատեր թաղանթապատ | 160մգ; (20/2x10/) բլիստերում, (40/4x10/) բլիստերում | Բիոնորիկա ՍԵ, Կերչենշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալց- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Վիվելհոֆե ԳմբՀ, Դեռնեբրինք 19, 49479 Իբբենբյուրեն, Գերմանիա- բալք արտադրող | Գերմանիա | Բիոնորիկա ՍԵ, Կերչենշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալց | Գերմանիա | ԱԴ | 24391 (047068) 31.07.2026 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Սինուպրետ էքստրակտ | բոզի արմատներ, գնարբուկի ծաղիկներ, ավելուկի խոտ, կտտկենու ծաղիկներ, արավնիձի խոտ | դեղահատեր թաղանթապատ | 160մգ; (20/2x10/) բլիստերում, (40/4x10/) բլիստերում | «Բիոնորիկա Ֆարմասյուտիքալս» ՍՊԸ, 396333, Վորոնեժի մարզ, Նովուսմանսկի Մյունիսիպալ Դիսթրիկթ, Նիկոլսկոյե Ռուրալ Սեթլմենթ, Մասլովսկի Ինդուստրիալ Պարկ թերիթորի, 1-ին Պարկովայա Սթրիթ, շենք 2, Ռուսաստան- փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, «ԻՑԼՍ Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ Ռուսաստան, Մոսկվայի մարզ, 142700, Լենինսկի Ուրբան Դիսթրիկթ, Վիդնոյե, 8-րդ Լինիա Սթրիթ, 10Ա- որակի (մանրէաբանական) հսկող, Վիվեւիոֆե ԳմբՀ, Դեռնեբրինք 19, 49479 Իբբենբյուրեն, Գերմանիա- բալք արտադրող | Ռուսաստան | Բիոնորիկա ՍԵ, Կերշենշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալց | Գերմանիա | ԱԴ | 24392 (047068) 31.07.2026 |
| 4 | Սինուպրետ էքստրակտ | բոզի արմատներ, գնարբուկի ծաղիկներ, ավելուկի խոտ, կտտկենու ծաղիկներ, արավնիձի խոտ | դեղահատեր թաղանթապատ | 160մգ; (20/2x10/) բլիստերում, (40/4x10/) բլիստերում | «Բիոնորիկա Ֆարմասյուտիքալս» ՍՊԸ, Վորոնեժի մարզ, Նովուսմանսկի Մյունիսիպալ Դիսթրիկթ, Նիկոլսկոյե Ռուրալ Սեթլմենթ, Մասլովսկի Ինդուստրիալ Պարկ թերիթորի, 1-ին Պարկովայա Սթրիթ, շենք 2, Ռուսաստան- փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, «ԻՑԼՍ Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ Ռուսաստան, Մոսկվայի մարզ, Լենինսկի Ուրբան Դիսթրիկթ, Վիդնոյե, 8-րդ Լինիա Սթրիթ, 10Ա, Ռուսաստան- որակի (մանրէաբանական) հսկող, Ռոտենդորֆ Ֆարմա ԳմբՀ, Օստենֆելդեր Շտրասսե 51-61, 59320 Էնիգերլոհ, Գերմանիա- բալք արտադրող | Ռուսաստան | Բիոնորիկա ՍԵ, Կերշենշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալց | Գերմանիա | ԱԴ | 24393 (047068) 31.07.2026 |